

թուլիկութեան, բողոքականութեան, ռուհճիութեան, մուհապէթճիութեան եւ կռապաշտութեան:

Խարբերոցին անդամ մըն է: Այդ անդամը, իբրեւ միս, քաշուած է ու անկէ պատրաստուած «քեօֆթե» ամէն տեսակ կազմակերպութեանց համար:

Այս պատճառով բոլոր այն միութիւնները, որոնք իրենց մէջ Խարբերոցի ունին, կը տառապին դժուարամարտութենէ:

*

Խարբերոցին կրնայ փոխել իր կրօնքը, իր հպատակութիւնը, իր գոյնը, իր լէզուն նոյնիսկ, սակայն հաւատարիմ կը մնայ Խարբերոցիութեան, որ իրեն համար թէ՛ ազգութիւն է, թէ՛ հպատակութիւն է, թէ՛ կրօնք է, թէ՛ կուսակցութիւն, թէ՛ աղանդ, թէ՛ արուեստ կամ արհեստ:

*

Կաղնիի մը պէս տոկուն եւ եղեգի մը նման ճկուն է:

Իբրեւ խօսքի մարդ՝ ճարտար է, ու իբրեւ գործի մարդ՝ ճարպիկ:

Կը յարգէ իր խօսքը, իր գործը: Այս պատճառով ալ քիթը մեծ է: Իր քթածայրը կամ ամպերուն մէջ է եւ կամ երկնի խորերը: Ահա թէ ի՞նչու իր քիթէն դիւրաւ կը բռնեն անտարանիչները, առաքեալները, սուրբերը, սրբուհիները ու մանաւանդ՝ «պորտ»աբոյծները: